ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի 2025 թվականի N 1269 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N 534-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման 3-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) որոշման 9-րդ հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ բաժնով՝

«VI. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ E-WORK.AM ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

22. Գործատուների հետ համագործակցությունը e-work.am հարթակի (այսուհետ՝ հարթակ) միջոցով կազմակերպելու նպատակով գործատուն պետք է գրանցվի

հարթակում և ստեղծի օգտահաշիվ՝ լրացնելով անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի, հանրային ծառայությունների համարանիշը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը կամ ընտրելով mID/eID սեղմակները՝ անցում կատարի «ԵՍ ԵՄ» ազգային նույնականացման հարթակ, որտեղ ընտրելով «Բջջային նույնականացման քարտ» կամ «Նույնականացման քարտ» դաշտերը՝ անցնի նույնականացում: Նույնականացումն անցնում է սույն որոշման 3-րդ հավելվածի Ձև 1-ի 1-2-րդ կետերում նշված տվյալների շտեմարանների հետ փոխգործելիության միջոցով՝ ինքնաշխատ եղանակով:

Կազմակերպության տվյալները հարթակում արտացոլվում են ինքնաշխատ եղանակով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկատվության հիման վրա: Մասնավորապես, հարթակում արտացոլվում է իրավաբանական անձի անվանումը, կազմակերպա-իրավական ձևը, պետական գրանցման ամսաթիվը, իրավաբանական անձի գտնվելու վայրը, իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, պետական հաշվառման ամսաթիվը, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման կամ բնակության կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վայրի հասցեն:

23. Հարթակում գործատուն կարող է հանդես գալ ղեկավարի կամ ղեկավարի կողմից լիազորված անձի միջոցով:

24. Գրանցվելուց հետո հարթակում պահանջվող դաշտերը լրացնելով՝ գործատուն կարող է.

1) հրապարակել իր մոտ առկա թափուր աշխատատեղը.

2) որոնել և գտնել աշխատողներ, փորձնակներ, կամավոր աշխատողներ.

3) ուղարկել հրավեր և նշանակել հանդիպումներ իր կողմից ընտրված աշխատանք փնտրող անձանց հետ.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով ներգրավվել զբաղվածության պետական ծրագրերում և համալրել իր մոտ առկա թափուր աշխատատեղը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և չի տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ